№ 154 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 17

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 154 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 17

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲԼԻ

Ամսական Մէկ բուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 բուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կօպ.

ՍՏԻՊՎԱԾ ԶԻԶՈՒՄՆԵՐ

I

Թէ Թիֆլիսում և թէ Անդրկովկասի ուրիշ տեղերում զտնվող Թիւրքիացիները չափազանց մեծ ձեռնպահութեամբ են վերաբերվում դէպի Թիւրքական սահմանադրութիւնը։

Թիւրքիացի հայեր, Թիւրքեր, յոյներ, որոնք գտնվում են մեր երկրում, դեռ վստահ չեն, թէ իսկապէս ազատութիւն է սկսվում օսմանեան պետութեան մէջ։

Սոսկալի կոտորածների, ջարդերի և հալածանքների ուրուականը, որ տարիներ շարունակ կանգնած էր ամեն մի օսմանցու աչքի առաջ, այնքան շշմեցրել է և յուսահատեցրել մարդկանց, որ նրանք չեն կարողանում հաւատալ՝ թէ արհաւիրքի ոգին հեռացել է իսկապէս և կարելի է արդարև սկսել նոր կեանքով ապրել։

— Սպասենք խոստումների արդարացման և յետոյ ուրախանանք ու սիրտներս բաց անենք,—ասում են Թիւրքիացիները։

Թիւրքիացիների մէջ կորել է ամեն մի վստահութիւն և հաւատ դէպի այն խոստումները, որոնք բղխում են Եըլդզից։ Եւ միայն իրական փաստերը և սահմանադրութեան իրական գործադրութիւնը կարող են մարդկանց համոզել, թէ յիրաւի հին մղձաւանջը անցել է և ստեղծվում են պայմաններ նոր քաղաքացիական կեանքի համար։

Շեն վստահում Եըլդզի վրա ոչ Թիւրքիայում ապրող ազատասիրական ոգիները, ոչ Եւրոպայում գտնվող «երիտասարդ-Թիւրքերը»։ Ոչ որ։

Կ. Պոլսից եկող հեռագրական լուրերը ցոյց են տալիս, որ ամեն տեղ էլ նկատվում են զսպված տրամադրութիւն և զգացմունքների վերին աստիճանի զգուշաւոր արտայայտութիւններ։

Եւ ահա մենք լսում ենք «երաշխաւորութեան» պահանջի ձայնը։

— Երաշխաւորութիւն տուէք, որ սահմանադրութիւնը յետ չի վերցվի, որ խոստումները չեն դրժվի։

Ահա ինչ է ասում այդ ձայնը։

Եւ սակայն՝ որքան էլ տրամաբանական և բնական համարվէր երաշխաւորութեան պահանջի ձայնը, նա բոլորովին անգործնական և անիրագործելի բնաւորութիւն ունի, որը չի տայ ոչ մի դրական հետևանք, իսկ կարող է բացասական արդիւնքներ առաջացնել մեծ ծաւալով։

Արդարև՝ ինչը կարող է իբրև երաշխաւորութիւն ծառայել սահմանադրութեան ամրութեան և յարատևութեան համար։

Միայն մի բան—օսմանեան ժողովրդի քաղաքացիական հասունութիւնը, նրա անյողդողդ կամքը ապրելու ազատ սահմանադրական կեանքով։

Սակայն այդ հասունութիւնը դեռ գոյութիւն չունի այնպիսի ներքին ոյժով, որ կարող լինի որոշել իրերի դրութիւնը իր տրամադրութիւնների համաձայն և այդ կամքը դեռ այնքան կուռ ու ուժեղ չէ, որ հրամայողաբար թելադրէր իր պատուէրները։

Իսկ դրանից դուրս ինչ երաշխաւորութիւններ կան։

Ոչինչ։

Զօրքի վրա դրված յոյսերը խախուտ յոյսեր են։ Զօրքը միայն գործիք կարող է լինել ղեկավարների ձեռքին։ Եւ եթէ նա մի քանի տեղ երիտասարդ-Թիւրքերի ազդեցութեան տակ կը լինի, շատ ուրիշ տեղերում նա կը լինի հին ըէժիմի մարդկանց տրամադրութեան տակ։ Զօրքի մասերը կարող են ընդհարվել միմեանց հետ և յաղթութիւնը կարող է տատանվել այս ու այն կողմը։ բայց դժուար է ասել, թէ Թիւրքիայի պալամաններում և օսմանեան դժոխքում սնված մեծացած զօրքը կարող է լուսաւոր քաղաքակրթական նպատակների և հոսանքների ջատագով հանդիսանալ երկարատև մաքառման մէջ։ Ոչ, նա աւելի շուտ կը թեքվի իր նախկին հրամայողների կողմը և այնուհետև կը դառնայ մի սոսկալի կործանիչ ոյժ։ Եւ եթէ մի թոյլ պարսկական կառավարութիւն, որ նոյնիսկ զօրք չունի, կարողացաւ իր աննշան վաշտերը շարժել ազատականների և սահմանադրականների դէմ, անկասկած՝ օսմանեան կառավարութիւնը կարող կը լինի ամբողջ զօրագնդեր շարժել իր շահերի պաշտպանութեան համար։

Իսկ Եւրոպան։ Մինթէ նա սառն հանդիսատես կը լինի։

Անտարակոյս։ Նա չի խառնվի ներքին քաղաքացիական գործերի մէջ։ Եւ միայն հարց կը յարուցանէ իր վրա տանգված շահերի պաշտպանութեան մասին։

Դա արդէն ուրիշ խնդիր է և նրա լուծումը ուրիշ կնճիռների և բարդութիւնների դուռ կը բանայ, որոնց մասին այժմ վաղաժամ է խօսել։

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

—

Վիէննա, 15 յուլիսի

«Corresp. Bureau»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ Պերայի կառավարիչ Համդի-բէյը նշանակված է ոստիկանական մինիստր։

Հրատարակված է իրադէ պարլամենտը վերաբանալու և նրա համար նոր շէնք պատրաստելու ի հաշիւ սուլթանի։

Հեռագիրների վերաբերեալ ցենզուրան այսօրվանից վերացված է։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 15 յուլիսի

1876 թուականի սահմանադրութիւնը վերականգնված է առանց փոխոխութիւնների։ Լրագիրներում տպագրված օրինակը բառացի արտատպութիւն է նրա առաջին ընագրից։

Ղալաթիայում և Բոսֆորի բոլոր քաղաքներում արտասովոր աշխուժութիւն է տիրում։ Յոյների ամբոխը ցոյցեր էր անում Թիւրքական դրօշակներով, օրը թնդացնում էին կեցցէներով ի պատիւ սուլթանի, որ ազատութիւն է շնորհել։ Սուլթանի անունով ստացվում են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։ Երեկոյեան ջահընթացութիւններ էին կազմակերպվել։ Հոգենաւերը, դրօշակներով զարդարված, անց ու դարձ էին անում երաժշտական նուագածութիւններով, նուագելով ազգային օրհներգները։ Ամեն տեղ մանիֆէստացիաներում մասնակցում էին Թիւրքերը, քրիստոնեաների հետ եղբայրակցելով։ Սրճարաններում արտասանվում էին ճառեր Թիւրքերէն և յունարէն լեզուներով։ Ոստիկանութիւնը չէր միջամտում։ Ամեն տեղ պահպանվում է կարգը։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 15 յուլիսի

Երէկ կէսօրից յետոյ Եըլդզի առջև տեղի ունեցաւ մի խոշոր ցոյց, որին մասնակցում էին հազարաւոր անձինք, գլխաւորապէս ժուսուլման ազգաբնակութեան միջին դասը մօլլաների առաջնորդութեամբ։ Ցուցարարները կրում էին դրօշակներ հետևեալ մակագրութեամբ. «Կեցցէ սուլթանը, կեցցէ ազատութիւնը և կեցցէ սահմանադրութիւնը»։ Ամբոխը, որի մէջ կային նաև շատ թիւրք կանայք, երկարգ կանգնած փողոցներում ողջունում էր ցուցարարներին։ Եըլդզի գլխաւոր դարպասների առջև ցուցարարները ցնծութեան օվացիաներ արեցին սուլթանին։ Լրագիրների արտակարգ յաւելուածներում հրատարակված է պաշտօնական դիմումն ուղղված ազգաբնակութեան, որով առաջարկվում էր մանիֆէստացիաներ չանել։ Ռամկալի մանիֆէստացիաները անմիջապէս դադարեցին։ Ցենզուրայի վերացումը և վերջին անցքերը մեծ ոգևորութիւն են ներշնչել Թիւրքական մամուլին։ Լրագրական տիրածները հսկայական չափերի բարձրացան։ Հասարակութիւնը արագութեամբ սպառում է բազմաթիւ լրագրական համարները՝ վճարելով կրկնակի գներ։ Թիւրքական մամուլը ոգևորութեամբ ողջունում է ցենզուրայի և գաղտնի ոստիկանութեան վերացումը։ Թիւրքական լրագիրների ասելով, զաւառական իշխանութիւնները հրաման ստացան այսուհետև զգուշութիւն ունենալ միայն Բաբ-ալ-ազիզ Դրան հետ։ Այսօր լոյս տեսած Թիւրքական լրագիրների յաւելուածում տպագրված է պաշտօնական հաղորդագրութիւն, որտեղ մատնանշված է, որ սուլթանի վճռական ցանկութիւնն է իր բոլոր մանրամասնութեամբ իրագործել սահմանադրութիւնը, որի ի կատարածումը ոչ մի դիտումներով չի վնասվի։ Ամենուրեք անյապաղ և եռանդով կը դիմեն ընտրութիւններ կատարելու։ Պարլամենտը կը բացվի նոյեմբերի 1-ին (Ն. տ.)։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 15 յուլիսի

«Corresp. Bureau»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ յունական մամուլը աշխատում է ծառայեցնել մամուլի ազատութիւնը և բաղաքական տեղեկութիւնները մակեդոնական գործերի մասին, և տպագրում է յարձակողական յօդուածներ բոլգարների դէմ։

—

Բերլին, 15 յուլիսի

Տեղիս հասարակական շրջաններում առանձնապէս ընդգծում են Թիւրքիայի յեղաշրջման խաղաղ ընթացքը, որ կատարվեց առանց արիւնհեղութեան։ Բօրսան նպաստաւոր կերպով է խօսում Թիւրքական անցքերի մասին։

—

Կ. Պոլիս, 15 յուլիսի

Սոֆտաների և ազգաբնակութեան մի քանի ուրիշ դասակարգերի մէջ կազմակերպվել են հայրենասիրական հակա-ազատամիտ խմբակներ ընդդէմ շօվինիստ երիտասարդ - Թիւրքերի։ «Սաբահ» լրագիրը յայտնում է, որ պետութիւնները պէտք է հրաժարվեն բարենորոգչական գործունէութիւնից, որովհետև սահմանադրութիւնը ապահովում է բարենորոգումներ ամբողջ կայսրութեան համար։ Յուլիսի 14-ին հրատարակված է իրադէ անմիջապէս ընտրութիւններ կատարելու սահմանված կանոնադրութեան համաձայն Կ. Պոլսում և նրա շրջակայքում։ Ծովային մինիստր ծովապետ Բասի փաշան հրաժարվել է ծառայութիւնից. նրա փոխարէն նշանակված է փոխծովապետ Խալիֆ-փաշան։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 15 յուլիսի

Յուլիսի 14-ին Թիւրքական լրագիրների խմբագիրները ներկայացել են մեծ վէզիրին և յայտնել (կարծիքը), որ անհրաժեշտ է ազգաբնակութիւնը հանգստացնելու նպատակով ամնիստիա շնորհել։ Վէզիրը հաղորդել է, որ հրատարակված է իրադէ, որով յայտարարվում է ընդհանուր ամնիստիա. ամնիստիա է շնորհվում քաղաքական յանցանքների համար բանտարկութեան դատապարտվածներին ու աքսորվածներին։ Լրագրական արտակարգ յաւելուածների միջոցով յայտարարված է այդ իրադէն։ Զինուորական մինիստրութեան առջև կայացած բազմամարդ միտինգին մասնակցել են օֆիցէրներից շատերը։ Միտինգը ընտրել է վեց հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն, որը ներկայանալով մեծ վէզիրին՝ պէտք է պահանջի պաշտօնազուրկ անել և պատժել անպարտաճանաչ պաշտօնեաներից շատերին։ Մեծ վէզիրը պատասխանել է, որ վերոյիշեալ անձինք զտնվում են սահմանադրութեան հովանու ներքոյ։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 15 յուլիսի

Կ. Պոլսից, 15 յուլիսի

Լրագիրները եավաշնի կարգով ազատվել են ցենզուրայից, առանց թողնելու ցենզուրաներին խմբագրատուն մտնելու։ Հեռագիրների ցենզուրան շարունակվում է։ Թիւրք կանանց մեծամասնութիւնը փողոց է դուրս գալիս բաց երեսով։ Հեղինակաւոր աղբիւրներից հաղորդում են, որ սուլթանը փնտրել է վերականգնել սահմանադրութիւնը արդէն այն բանից յետոյ, երբ Բոսֆորի ու Դարդանէլի ամրութիւնների հրամանատարներին ուղարկված հրամանին՝ պատրաստվել պաշտպանելու մայրաքաղաքը ապստամբած զօրքերից, պատասխան ըստացվեց, որ պատրաստվելը անօգուտ է, որովհետև թշնամիներ չը կան։ Վէզիր Սաիդ-փաշան հետզհետէ հեղինակութիւն է ձեռք բերում։ Նա ծառայութիւնից արձակել է բազմաթիւ լրտեսների, մինիստրների խորհրդից հեռացրել է սուլթանի անձնական բարտուղար Իզզէթ-փաշային, բացարձակ կերպով հակառակվեց պալատական շրջաններին։ Այդ փաստերը զանազան կոմենտարիաների տեղիք են տալիս։

Սալոնիկից զեկուցանում են, որ քաղաքը փաստօրէն գտնվում է զօրքի ձեռքում, որին ղեկավարում են երիտասարդ-Թիւրքերը, որոնք պահանջում են պաշտօնազուրկ անել իշխանաւորներին։ Նոյնը տեղի ունի նաև Մակեդոնիայի միւս քաղաքներում։ Դրութիւնն օր ըստ օրէ լուրջ կերպարանք է ստանում։ Իշխանութիւնը սուլթանի ձեռքից գնում է։ («Գ. Հ.»)

—

Մակեդոնիայում կատարվող անցքերը առիթ են տուել «Matin» լրագրի աշխատակիցներից մէկին գնալ սուլթան Համիդի քրոջ որդի Սաբահ Էդդինին տեսնելու, որը ներկայումս գտնվում է Պարիզում։

Այդ իշխանը հաստատում է ապակենտրոնացման օսմանեան լիգայի հիմնադիրը և Թիւրքիայի ազատագրական շարժման գլխաւոր գործիչներից մէկը։

Իշխան Սաբահ-Էդդինը Մակեդոնիայում ներկայումս կատարվող անցքերը հաստատում է մի էջը այն մեծ դրամայի, որ տեղի ունի Թիւրքիայում սահմանադրականների և բռնակալութեան կողմնակիցների միջև։ Առաջադէմ Թիւրքերը վաղուց արդէն դադարել են թագցնել իրանց զայրոյթը Թիւրքիայի մէջ տիրող կառավարչական բռնակալութեան դէմ։ Այն եռակի վրդովմունքը, որ արտայայտվում է գաւառների բռնակալ նահանգապետների դէմ, ոչ այլ ինչ է, բայց եթէ բողոքներ գոյութիւն ունեցող վարչական եղանակի դէմ։

Վերջին ժամանակներս յաճախակի կրկնվող խռովութիւնները Թիւրքիայի մի քանի եւրոպական գաւառներում վկայում են, որ ազատագրական շարժումը ինտելիգէնտ շրջանների մէջ անցել է արդէն հասարակութեան լայն խաւերը։ Վաղ թէ ուշ Թիւրքական ժողովրդի սոցիալական էվոլիւցիան պատճառ կը լինի գոյութիւն ունեցող բռնժիմի անկմանը։ Չը պէտք է սպասել, որ այդ բանը կատարվի տերրորի միջոցով։ Սուլթանը ունի իր իրաւասութեան ներքոյ այն բոլոր միջոցները, որոնցով նա կարող է վարչական հին եղանակից անցնել նորին բոլորովին խաղաղ կերպով, և այդ ճանապարհը ամենարժանաւորն է մի միապետի համար, որը բոլոր ժամանակների պիտն է։

Թիւրքիայի վերանորոգութիւնը բարերարութիւն կը լինէր ամբողջ աշխարհի համար։ Հզօր, առաջաւոր Թիւրքիան բնական լուծումն կը տար արեւելեան հին հարցին, որ իբրև մի սպառնալիք կախված է միջազգային խաղաղութեան վրա։

Երիտասարդ Թիւրքերի ներկայ շարժումը զուտ առաջադիմական մի շարժում է. նա ոչ մի վտանգ չէ ներկայացնում ոչ օտարերկրացիների համար և ոչ էլ Թիւրքիայի առհասարակ քրիստոնեայ ազգութիւնների համար։ Հին Թիւրքերը հիմք ունեն վախեցնելու Եւրոպային այդ շարժումով, բայց նա պէտք է հաւատայ երիտասարդ Թիւրքերի անկեղծութեանը, որոնք բոլորովին անկեղծօրէն արտայայտվել էին պետութիւններին տուած իրանց յիշատակագրի մէջ։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍԸ

—

Լոնդոն, 15 յուլիսի

Թագաւորը և թագուհին ընդունեցին Բուքինհայմի պալատում ունկնդրութեան այժմ գումարված խաղաղութեան միջազգային կօնգրէսի 24 անդամներին։ Կօնգրէսի անդամներից մինը, դիմելով թագաւորին ողջոյնի ճառով, անուանեց նրան ախոյեան խաղաղութեան։ Թագաւորը, ողջունելով իր կողմից պատգամաւորներին, ասաց, որ ոչ մի բան այնքան հաճոյք չէ պատճառում իրան, ինչպէս գիտակցութիւնը, որ իր գործ դրած ջանքերը՝ խաղաղութիւնը պահպանելու ազգերի մէջ՝ անպտուղ չանցան, գիտակցութիւնը, որ իր այդ ջանքերը գնահատման արժանացան ոչ միայն Անգլիայի, այլ և ուրիշ երկրների կողմից։ Վեհապետները,—շարունակեց Թագաւորը,—չեն կարող իրանց համար աւելի վեհ նպատակ դնել, քան լաւ յարաբերութիւնների և սրտագին բարեկամութեան խրախուսանքը ազգերի մէջ։ Դա ամենաուղիղ միջոցն է, որով մարդկութիւնը կարող է իրականացնել իր ըղձալի իդէալը։ Հասնել այդ նպատակին՝ եղել է նրա մշտական անուրջը։ Թագաւորն իր ճառի վերջում յոյս յայտնեց, որ խաղաղութեան կօնգրէսի աշխատութիւնները օրհնեալ կը լինին։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 15 յուլիսի

«Times» լրագիրը քննում է խաղաղութեան կօնգրէսի պատգամաւորութեան ընդունելութիւնը թագաւորից։ Գտնելով որ այդպիսի դաշնակցութիւններ կարող են օգտաւէտ կերպով նպաստել խաղաղութեան գործին, լրագիրը սակայն բացասաբար է վերաբերվում դօքտոր Դօրտոնի արտայայտած ուսման, որը կօնգրէսի նախապատրաստական ժողովում յայտնեց, թէ եկեղեցին պէտք է հրատարակէ պատերազմը հակաքրիստոնէական երևոյթ, զրկէ պատերազմը իր օրհնութիւնից և վերջ դնէ պատերազմական պատրաստութիւններին։ Ապա լրագիրը գրում է, որ Գրէյի երեք օր առաջ պալատում արտասանած ճառի նման ճառերը և բեվելեանի պէս հանդիսումները աւելի կը նպաստեն խաղաղութեան պահպանութեան ներկայ դրութեան մէջ, քան անպատասխանատու անձանց բազմաթիւ կօնգրէսները։ Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարիչները և պետական անձինք ոչ պակաս լրջօրէն ձգտում են խաղաղութեան, քան Դօրտոնները և նրանց

ունկնդիրները։ Ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը շատ բան արեց խաղաղութեան պահպանութեան համար։ Նրա բարի արդիւնքները այդ կողմից կարող են միայն բազմանալ այն համաձայնութիւններով, որ այդ օրից կնքվել են Անգլիայի ձեռքով մասնակիցներից ամեն մէկի հետ։ Մենք ստացանք այդպիսի համաձայնութիւնների գործնական հետևանքների ակնյայտնի ապացոյցները։ Նորերս մեր դաշնակցութիւնը Եպաօնիայի հետ սահմանափակեց ռուս-եպաօնական պատերազմի սահմանները. մեր համաձայնութիւնը Ֆրանսիայի հետ հեռացրեց վտանգաւոր բարդութիւնները այնքան մօտ Անգլիային։ Այժմ մեր մերձաւորութիւնը Ռուսաստանի հետ և նրան կից համաձայնութիւնը փրկում են Ռուսաստանը և մեզ ծանր վտանգներից Պարսկաստանում և Մերձաւոր Արևելքում։ («Հ. Գ.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 15 յուլիսի

Ժանտախտի վարակման դէմ մաքառող մասնաժողովը հաղորդում է, որ յուլիսի 11-ից մինչև յուլիսի 14-ը խօլերայով հիւանդացել են 11 հոգի և մեռել են 4, ընդամենը յուլիսի 8-ից հիւանդացել են 13, մեռել՝ 5։ Յուլիսի 11-ին և 12-ին Երևան են հանված խօլերայով հիւանդանալու 11 դէպքեր և 8 մահվան դէպք։ Համաճարակի սկզբից հիւանդացել են 18, մեռել են՝ 11։ Սամարայի նահանգի Բալակով քաղաքում յուլիսի 11-ին հարաւից եկող երկու շոգենաւերում գտել են երկու կասկածելի հիւանդ, որոնցից մէկը մեռել է. դեռ ևս պարզված չէ թէ ինչ հիւանդութիւնից։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 15 յուլիսի

Աղրբէյջանի զօրքերի նոր նշանակված հրամանատար Սեպէհդար-Նասրուս-Սալթանէն վաղը ճանապարհվում է Թաւրիզ երկու գնդերով և 500 ձիաւորներով։

Թիւրք կառավարութիւնը արգելել է Թիւրքական սահմանը մտնել Սէիդ-Աբդուլլային, որը աքսորված է Քերբալայ և այժմ բերված է սահմանագլուխը։ («Հ. Գ.»)

ՖՐԱՆՍԻԱՆԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԱԼՈՒՍՏԸ

—

Բեվէյ, 14 յուլիսի

Թագաւոր Կայսրը, պալատի և արտաքին գործերի մինիստրների, Պարիզի ռուս դեսպանի, Նորին Մեծութեան զինուորական դիւանատան հրամանատարի, ֆլիգ-կապիտանի, ֆլիգ-օֆիցերի և այլոց ուղեկցութեամբ շոգեմակոյկով անցաւ դէպի «Վերիտէ» զրահակիրը։ Սանդուղքի վերին հրապարակի վրա Նորին Մեծութեանը դիմաւորեց Նախագահ Ֆալիէրը։ Հենց որ ոտք դրեց տախտակամածի վրա, առաջատի վրա Նախագահի դրօշակի հետ ծածանվեց Թագաւոր Կայսրի դրօշակը։ Զրահակիր կօմանդան կանգնած էր ճակատում, հագնէս էր դրված պատուաւոր պահակախումբը։ Կրկին որոտացին թնդանօթները ֆրանսիական, ապա ռուսական նաւերից։ Նորին Մեծութիւնը մնաց Նախագահի զրահակրի վրա մօտ մի ժամ։ 5 ժամ 7 րոպէին կէսօրից յետոյ Թագաւոր Կայսրը վերադարձաւ «Շտանդարտ» նաւը։

Երեկոյեան 8 ժամին «Շտանդարտի» վրա կայացաւ հանդիսաւոր ճաշ Բարձրագոյն ներկայութեամբ, որին ներկայ էին Նախագահը իր շքախմբով, մինիստրները, Թագաւորի շքախմբի անդամները։ Երեկոյեան երկու նաւատորմիղների նաւերը լուսավառված էին։

—

Բեվէյ, 15 յուլիսի

Հանդիսաւոր ճաշին կայսերական «Շտանդարտ» դրօսանաւի վրա Բարձրագոյն սեղանին կենտրոնական տեղերը գրաւած ունէին Թագաւոր Կայսրը, Նորին Մեծութեան աջ կողմը Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան և Նախագահ Ֆալիէր։ Նորին Մեծութեան ձախ կողմում՝ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը և ռուսաց արտաքին գործերի մինիստրը։ Ճաշի ժամանակ Նորին Մեծութիւնը բարեհաճեց արտասանել. «Բուռն և անկեղծ գոհունակութիւն եմ զգում, պարոն Նախագահ, ողջունելով ձեզ ռուսական ջրերում, և սրտագին շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ ձեր այցելութեան համար, որն ընդունում է ամբողջ Ռուսաստանը, որպէս ապացոյց անկեղծ և անխախտ բարեկամութեան կապերի, որոնք միացնում են Ֆրանսիան և Ռուսաստանը։ Ձեր ներկայութիւնը մեր մէջ, Ես հաւատացած եմ, այն հետևանքը կունենայ, որ աւելի ևս կամրանան այդ կապերը, և կրկին անգամ երևան կը հանէ երկու բարեկամ և դաշնակից երկիրների հաստատուն կամքը՝ աջակցել պահպանելու և ամրացնելու ընդհանուր խաղաղութիւնը։ Խմում եմ ձեր կենացը, պարոն Նախագահ, և Ֆրանսիայի փառքի ու բարօրութեան համար»։

Ի պատասխան հանրապետութեան Նախագահն ասաց. «Թագաւոր, Ձեր Մեծութիւնը չէր կարող կասկածել այն մեծ գոհունակութեան վրա, որ կը տայ Ֆրանս. հանրապետ. Նախագահին ռուսական ջրերում սրտագին ողջոյն մատուցանելը Ձեզ Ֆրանսիայի կողմից։ Տանում եմ այն զգացմունքները, որ երջանիկ եմ արտայայտելու Ձեզ և Նորին Մեծութեան Թագուհի Կայսրուհուն, որ իր ներկայութեամբ առանձին հրաժայք է տալիս այս փառաւոր հանդիսին։ Շնորհակալութիւն եմ յայտնում Ձեր Մեծութեանը այն խօսքերի համար, որ Դուք քիչ առաջ արտասանեցիք, և երջանիկ եմ հաստատել այստեղ Ձեզ հետ միասին մշտական և հաւատարիմ բարեկամութեան զգացումները, որոնք միացնում են մեր երկու ազգերը։ Այդ դաշնակցութիւնը, այնքան բարեբաղդօրէն կնքված ընդհանուր շահերի պահպանութեան համար, ստանում է թանգագին նուիրագործումն ժամանակից։ Հանդիսանալով Եւրոպայում գրաւական հաւասարակշռութեան, նա կը յաւերժանայ Ֆրանսիայի և Ռուսաստանի մեծագոյն բարիքի համար։ Ես ևս, ինչպէս և Դուք, Արքայ, համոզված եմ, որ մեր ներկայ հանդիպումը կը հաստատէ մի անգամ ևս երկու բարեկամ և դաշնակից երկիրների ամուր կամքը՝ նպաստել համաշխարհային խաղաղութեան ամրացման և պահպանութեան։ Բարձրացնում եմ բաժակս ի պատիւ Ձեր Կայսերական Մեծութեան, Նորին Մեծութիւն Մայր-Կայսրուհու, ամբողջ Կայսերական Ընտանիքի։ Խմում եմ վասն մեծութեան և երջանկութեան Ռուսաստանի, բարեկամին և դաշնակցին Ֆրանսիայի։ («Հ. Գ.»)

—

Բեվէյ, 15 յուլիսի

Այսօր, առաւօտեան ժամը 10 և 30 րոպէին, Ֆալիէրին ներկայացաւ Էստլանդիայի նահանգապետի միջոցով ազնվականութեան պատգամաւորութիւնը։ Երեկ ռուսական նաւերը «Ցեսարեվիչ» զրահաւորի վրա բանկետ տուին ի պատիւ Ֆրանսիական օֆիցէրների և զինուորների։ Այսօր «Դիւպտիտուար» կրէյսերի վրա կայացաւ Ֆրանսիական նաւերի տուած մեծարանքը ռուսաց օֆիցէրներին և նաւաստիներին։ («Հ. Գ.»)

—

Բեվէյ, 15 յուլիսի

Ցերեկվայ ժամը 12-ին «Շտանդարտ» եախտի վրա կայացաւ Բարձրագոյն նախաճաշ, որին ներկայ էր նախագահ Ֆալիէրը իր ուղեկից անձանց հետ։ Երբ նախագահը ժամանեց, ժարսելիօզի երգը թնդաց և ողջոյն թնդանօթներից։ Ժամը 4-ին կէսօրից յետոյ Թագաւորը իջաւ շոգեմակոյկը, որով գնաց Ֆրանսիական «Դիւպտիտուար» կրեյսէրը, ուր նրան դիմաւորեց նախագահը իր շքախմբով հիմնի թնդիւնով։ Երբ կայմի վրա նախագահի դրօշակի կողքին սկսեց ծածանվել կայսերական դրօշակը, թնդաց սալիւտը։ Թագաւորին ուղեկցում էին պալատի և ծովային մինիստրները։ Ընդունելով զեկուցագիրը և անցնելով պատուաւոր պահակախմբի առաջից, Թագաւորը, նախագահի և շքախմբի ուղեկցութեամբ, հրամանատարական պալուբայի վրա նայեց «Աբուկիրի ճակատամարտ» պատկերը։

Ապա Թագաւորը և նախագահը գնացին ռուսաց «Ցեսարէվիչ» նաւը, ուր նախագահը ընդունեց զեկուցագիր, որից յետոյ մեկնեց ժարսելիօզի և ուռաների թնդիւններով և անցաւ «Վերիտէ» նաւը։ Նորին Մեծութիւնը ճանապարհ դրեց բարձր հիւրին, որի մեկնելուց յետոյ Թագաւորը ժամը 5-ին անցաւ «Շտանդարտ» եախտան։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒԱԶԱԿՆԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՍԱԹՈՒՆԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎՐԱ

—

Յուլիսի 14-ին, երկուշաբթի օրը, Գառնակերեան Գրիգոր արքեպ. և ուսուցիչ Սըմբատը Սանահնից գնում են Հաղբատ։ Ճանապարհին աւազակները բռնելով նրանց պահում են Ոռնակի ձորում։ Սակայն երբ իմանում են, որ բռնված եպիսկոպոսը առաջնորդը չէ, երեկոյեան դէմ բաց են թողնում նրանց։

Այնուհետև աւազակներից երկուսը հեռանալով մնում են ուղիղ ժամը 8-ին Սանահնի վանքի դուռիթը։ Այդ ժամանակ Թիֆլիսի առաջնորդ Սաթունեան արքեպիս կոպոսը պատշգամբում նստած թէյ է խըմում եղել։ Աւազակներից մէկը ներս մըտնելով համբուրում է եպիսկոպոսի ձեռքը և ասում. «Դուրսը քեզ մի մարդ կանչում է»։ Եպիսկոպոսը ասում է. «Խնդրիր ներս գայ. ինչքան մեծ մարդ է, որ ինձ է կանչում»։

Աւազակը պնդում է թէ՝ «դու պիտի գաս», և ձեռքից բռնած դուրս է քաշում։ Երբ եպիսկոպոսը դիմադրութիւն է ցոյց տալիս, երկրորդ աւազակը հրացանը բռնում է կծքին և կամենում է խփել ասելով. «Ինչպէս համարձակվում ես չը գալ»։

Զաքարիա վարդապետը բռնում է աւազակի թևը, որը այդ ժամանակ կանգնած է լինում մօտին։

Աւազակների միտքը առաջնորդին գերելն էր։ Առաջնորդը նախասենեակից առաջ չէ գնում, երբ նկատում մի մօտ մի ուս աւազակին. և աւազակը փէշը բռնած կամենում է քաշել և ոյժով տանել Վարդապետը և սրբազանի եղբօրորդի Վաղինակն մնում են աւազակների ձեռքին. մի քանի անգամ հրացան են արձակում գիւղացիներին օգնութիւն կանչելով. աւազակների յոյսը ի դերև ելնելով խփում են վարդապետի երեսին հրացանի կոթով, իսկ նրանց որդուն քարշ տալով տանում մինչև Աստուածածնի ձորը։

Մանուկը պատմում է նրանց, որ ինքը ծառայ է և ուրեմն ինչի համար են տանում. այն ժամանակ աւազակները նրա գլխին խփելով ճանապարհ են դնում և իրանք փախչում։

Մինչև գիւղացիների օգնութիւն հասնելը Գառնակերեան եպիսկոպոսը, ուսուցիչ Սըմբատը և Գառնակերեանի ծառան պահվում են առանձնարանում։

Գիւղացիները ի նկատի ունենալով այս անակնկալ չարիքը՝ գիւղի բոլոր մուտքերը բռնել են։ Թէ ինչպէս կը վերջանայ, դեռ յայտնի չէ։ Աւազակները իրանց շահատակութիւններն են անում երկիրը վրդովելով և մնում են անպատիժ։ Ուր կը հասնի այս, Աստուած գիտէ։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասեան Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը յուլիսի 15-ի երեկոյեան իր ընտանիքով գնաց Տաբախմելա գիւղը, ուր ապրելու է իր Մելիքօվայի ամարանոցում։

◆ Վերջերս յաճախ դանդատներ ենք ստանում մեր բաժանորդներից և ընթերցողներից, որ «Մշակի» տպագրութիւնը վատ է։ Մենք ինքներս աւելի քան ուրիշը տեսնում ենք այդ, բայց մինչև այսօր անկարող էինք որևէ միջոց ձեռք առնել այդ անյարմարութեան առաջն առնելու համար։ Եթէ մինչև ամսիս վերջը տպարանատէրը միջոցներ ձեռք չառնէ իր տպարանը բարեկարգ դրութեան մէջ դնելու, մենք որոշեցինք օգոստոսի 1-ից անցնել ուրիշ տպարան, որ ունենայ տեխնիկական բոլոր յարմարութիւնները, և յոյս ունենք, որ օգոստոսի 1-ից «Մշակի» տպագրութիւնը կը լինի խնամված և գեղեցիկ։

◆ Վրաստանի եկեղբութեան հարցը տարաձայնութիւններ է պատճառում։ Ոմանք գտնում են, որ ներկայումս անյարմար է բոլորովին վերացնել եկեղբութիւնը և դարձնել նրան սովորական մի թեմ։ Ուրիշները կարծում են, որ ներկայ մօտենում անախորժ ընդհարումներ ստեղծել Վրաստանի եկեղեցու հետ, թեում է, անյարմար է։ Այս վերջին կարծիքը բազմաթիւ կողմնակիցներ ունի սինոդի անդամների մէջ, և նա, ըստ երևոյթին, կը յաղթանակէ։ Դրա հետ միաժամանակ խօսակցութիւններ են տեղի ունենում Վրաստանի եկեղբիի հաւանական թեկնածուների մասին։ Յիշվում են Դերմօգեն եպիսկոպոսի և Ռիգայի Ագաթանգեղոս արքեպիսկոպոսի անունները։ Ասենից աւելի հաւանական է համարվում վերջինիս թեկնածութիւնը։ («Р. Сл.»)

◆ Թիֆլիսում ապրող մի խումբ պարսկահպատակ մահմեդականներ հեռագիր են ուղարկել սուլթան-Համիդին իրանց բերկրանքը յայտնելով Թիւրքիային սահմանադրութիւն շնորհելու պատճառով։

◆ Ներկայումս Կովկասում թէյի թուփեր աճեցնելու հարցը առաջարկված է Լօնդօնի թէյարդիւնաբերողների քննութեան, ուր մտադրութիւն կայ կազմակերպել այդ նպատակով ակցիօներական ընկերութիւն։

◆ Թիֆլիս է եկել Կովկասի ռուս աղգաբնակութեան պատգամաւոր Պետական Դումայի անդամ Տիմօշկինը։

◆ Խմբագրութիւնս ստացել է Ներսէս քահ. Հերթեցեանի «Ամուսնութիւնը ազգերի կեանքում և եկեղեցին ամուսնական խընդրում» գիրքը։ գինն է 60 կոպէկ։

◆ Թիֆլիսի արքունական թատրոնը այս ձմեռվայ սեզոնում տրված է Էյխենվալդին ու կայսերական թատրոնների արտիստ Եակօվլեվին։

◆ Պեսկիի շրջանում գտնվող միդասեան եկեղեցական ծխական դպրոցը առաջարկված է դարձնել երկդասեան։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատել է Թիֆլիսի քաղաքային դումայի յունիսի 14-ին կայացրած որոշումը Տէր-Աբրահամեանի աւտօմօբիլով օգտվելու սակագնի մասին։ Երևանեան հրապարակի ու Ֆունիկուլեօրի կայարանի (Ներքին) և Երևանեան հրապարակի ու Մետեխի բերդի շրջանները գնալու համար վճարվում է 5-ական կոպէկ, նոյնքան էլ վերադառնալու համար։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Բագուի նաւթահանքերում յունիս ամսվայ ընթացքում ստացվել է ընդամենը 37,900,000 պուդ նաւթ, որոնցից 9,600,000-ը Բիբի-Էյբաթից։ Բացի դրանից Բիբի-Էյբաթում ֆոնտաններից նաւթ ստացվել է 180,000 պուդ։

◆ Յուլիսի 11-ի գիշերը Շամախինկա թաղում գտնվող բանտային հիւանդանոցի տիֆային բաժնի մօտ կանգնած պահակ զինուորը մթութեան մէջ նկատում է, որ դէպի իրան են մօտենում ինչ-որ 3—4 անյայտ մարդիկ։ Նրա «ով է գալիս» հարցին, եկողները արագութեամբ անյայտանում են։ Մի քանի րոպէ չանցած՝ պահակը նկատում է գնդի վրայով աղացող ինչ-որ մարդկային ստուեր։ Շուրջը նայելով նա տեսնում է երկու ուրիշ ստուեր ևս, որոնք դէպի իրան էին մօտենում։ Հասկանալով որ այդ ստուերները միևնոյն անձնաւորութիւններն են, որ քիչ առաջ դէպի իրան էին գալիս, պահապանը ուղղում է հրացանը և կրակում աւելի մօտիկ գտնվողին, բայց գնդակը վրիպում է։ Սողացողները ոտքի են կանգնում և, վազելով, անյայտանում են։

◆ «Բագուի նաւթարդիւնաբերական և առևտրական ընկերութեան» Փիրմայի Բալախանիի բանւորները, թւով 80 հոգի, յուլիսի 11-ի ցերեկվայ ժամը 3-ից գործադուլ են յայտարարել։ Բանւորները պահանջում են նպաստներ տալ իւրաքանչիւրին իր ստացած ռոճկի 40 տոկոսը։

◆ Յուլիսի 11-ի գիշերը յանկարծակի խուզարկութիւն է կատարվել Տատիանինսկայա փողոցում Ա. Խաչիէվի տանը, որտեղ բնակարաններից մէկում սեղանի շուրջը նստած էին վեց երիտասարդներ։ Խուզարկութեան ժամանակ գտել են մի տարբերանակ «Սմիտ և Վիսսօնի» տեսակի, երկու փամփուշտակալ 120 փամփուշտներով՝ պետական եռագծեան հրացանների համար, 80 հատ գնդակ, մի ֆունտ վառոդ և զանազան թղթեր ու նամակներ հայերէն լեզուով։ Ոստիկանութիւնը կալանաւորել է 6 երիտասարդներին էլ։ Շուշու գաւառի բնակիչ Գեորսիպ Համբարձումեան Բաբայեանին, Սողոմոն Սուլէյմանեան Հայրապետեանին, Յովհաննէս Առստամեան Ղահրամանեանին, Յարութիւն Համբարձումեան Բաբայեանին, Միրզա Բալասանեան Յարութիւնեանին և Սարգիս Պողոսեան Օհանեանին։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը ոստիկանական դեպարտամենտի բաժանմունքի անունից ներկայացրել է մինիստրների խորհրդի քննութեանը մի առաջարկ Տաւրիկեան պալատի պահպանութեան համար նշանակված պահակների կազմը լրացնելու մասին։ («Рав. Утро»)

◆ Վերջին շաբաթվայ ընթացքում Պետերբուրգի մէջ արձանագրված է անձնասպանութիւնների 35 դէպք, որոնցից, «Утро» լրագրի ասելով, 18 դէպք տեղի է ունեցել անգործութիւնից և ծայրայեղ կարիքից։

◆ Յուլիսի 27-ին Յարիցինի նաւահանգստում Իլիոդոր տէրտէոյակ վարդապետի երկրպագուները ու հետաքրքիր թաղումը խռնված սպասում էին նրա գալուստին։ Երբ շոգենաւը մօտեցաւ, ժողովրդից մի քանիսը սկսեցին ժամով ցոյց տալ Իլիոդոր վարդապետի ուր լինելը։ Այդ բանը վարդապետին դուր չեկաւ և նա սկսեց կարծես՝ Յարիցինի հասցէին հայհոյանքներ թափել. «լրբեր, անպիտան սրիկաներ և այլն»։ Իսկ երբ իջաւ շոգենաւից, պահանջեց շոգենաւային իշխանութիւնից ոստիկանատուն ուղարկել իրան ժամացոյց անողները։ հազիւ կարողացան համոզել նրան, որ շոգենաւի ծառայողները իրաւունք չունեն նրանց ոստիկանատուն ուղարկելու։ («Ю. К.»)

◆ Ֆինլանդական գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ ոստիկանութիւնը Ֆինլանդիայում գոյութիւն ունեցող բանւորական և այլ միութիւններից ստորագրութիւն է հաւաքում, որ իրանց կազմակերպած ցոյցերում, թափօրներում և հանդիսաւոր գնացքներում չեն մասնակցի ռուս բանւորները։ («Слово»)

ՄԱՄՈՒԼ

«Нов. Вр.» թերթի յատուկ թղթակիցը շարունակում է իր հայկեր և հայատեաց յօդուածները Պարսկաստանից։ Այդ պարոնը հազիւ ոտքը կոխեց պարսկական հողի վրա, որ իսկոյն մի նշանաւոր գիւտ արաւ։ Ռուսական շահերը այդտեղ վտանգվում են այն պատճառով, որ հայերը ամեն բան իրանց ձեռքն են ձգում. նոյնիսկ ռուսական բանկերում պաշտօնեաները հայեր են, փոխանակ որ ռուսներ լինէին։ Եւ թէկ բանկի ռուս կառավարիչը յայտնել է, թէ, առանց հայերի, իբրև տեղացիների և տեղական առևտրին, կրեդիտին ու գործերին հմուտ անձանց, անկարելի է գործ առաջ տանել, հետևաբար հայերին գործ և պաշտօն յանձնում են ոչ թէ նրանց գեղեցիկ աչքերի համար, այլ հարկադրված անհրաժեշտութիւնից, բայց պ. Թղթակիցը այդպիսի անհիմն նկատողութիւններով չէ համոզվում. նա միայն այս գիտէ, որ անիծեալ հայերը նոյն իսկ ռուսների հացը կամենում են կորել Պարսկաստանում...

*

Իբրև հակակշիռ, շատ հաճելի տպաւորութիւն են թողնում Վ. Օպօչինինի «Կովկասեան ակնարկներ» յօդուածները, որոնք տպվում են «Биржевые Вѣд.» լրագրի մէջ։

Յուլիսի 2-ի համարում տպված յօդուածը հէնց կամենում է ցոյց տալ այն մեծ անհեթեթութիւնը, թէ ռուս մարդիկ և «հայհեթեթներ» շատ չարիքների պատճառը կամենում են տեսնել միայն հայերի մէջ և բացատրել միայն հայերի «օյիններով»։

Դեռ 80-ական թուականներից,—ասում է Վ. Օպօչինինը,—սկսեց կազմվել հասարակութիւն, թէ հայերն են Ռուսաստանի գլխաւոր թշնամիները Կովկասում։ Դեռ մեր ծայրերկրային քաղաքականութեան դեկավար սկզբունքն էր, մի անվիճելի դօգմատ իսկական քաղաքական հաւատիով հակառակն էր մտածում, նրա քաղաքացիական բարեյուսութիւնը կասկածի տակ էր ընկնում։ Եւ սակայն դա ամենամեծ մոլորութիւնն էր, որ ունեցաւ ծանր հետևանքներ։ Նոյն իսկ այսօր, հեռու-արևելեան փոթորկից յետոյ, հօրիզոնը դեռ բոլորովին չէ մաքրվել։ Հայկական վտանգի ամպամած ուրուականը այժմ իսկ յաճախ վախեցնում է։

Ապա Օպօչինին ամփոփ և հատուկ կերպով մի պատմական տեսութիւն է անում, թէ ինչու Ռուսաստանը, ռուս քաղաքագէտները և կայսրները, ինչպէս Երմօլով, Պասկեվիչ, Նիկոլայ I կայսրը, առաջ քաշեցին հայերին, աշխատեցին գրաւել նրանց, լցնել հայ գաղթականներով Երևանի նահանգը, արտօնութիւններ շնորհեցին նրանց, և ցոյց է տալիս, թէ ինչ մեծ ծառայութիւններ մատուցին Թիւրքիայում հայերը Ռուսաստանին և ռուսական զէնքի յաղթանակին, բայց դրա փոխարէն ռուսները ոչ միայն չը թեթևացրին հայերի տանջանքը, այլ և պատճառ դարձան, որ Թիւրքաց կառավարութիւնը սկսեց նայել նրանց վրա իբրև դաւաճանների։ Հայերի ռուսներին ցոյց տուած հաժակրութիւնը դարձաւ նրանց համար աղբիւր բազմատեսակ ազէտների։ Եւ այդ է պատճառը, որ հայերը, բոլորովին կտրելով իրանց յոյսը ռուսներից, սկսեցին դիմել ուրիշներին՝ Հռոմի պապին, Ժօրէսին, Գլադստօնին, Սալսբիւրիին, երիտասարդ-Թիւրքերին, Հաագային, բայց ռուս քաղաքագէտները այդ ակտերը համարեցին դաւաճանութիւն և «հայկական օյիններ»։

Եւ կովկասեան բեպրեսսիաները սկսեցին զսպել այդ օյինները....

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

—

Էջմիածին, 3 յուլիսի

Լրագիրները յայտնեցին ողբացեալ Գրիգոր Վանցեանի մահը։ Թւել են նրա լոյս տեսած երկերը, իսկ անտիպ երկերի մասին, թէ ունի՝ ոչ մի խօսք։

Այենքն էլ անշուշտ ցաւ զգացին նրա համար, տակաւին երիտասարդ, թարմ գրող, և որ առաւել ափսոսալին է՝ մահաբեր գրող։ Ո՞վ նրան յանդիմանեց՝ թէ այս ու այն մտքերը ուրիշից իւրացրել-գողացել է, նման մեր միւս գրական «ազապարաներին»։ Ո՞վ նրա մասին մտածեց, թէ գրում է հաշուով, ոչ համոզված, այն ինչ այսօր առանց անհատական և նախընտրական կուսակցական հաշուի գրողներ չունենալուց է՝ որ ընկել նուազել է հայ մտաւոր կրիները։

Նրան ինքնասպանութեան մղող պատճառը մնաց անյայտ ընթերցող հասարակութեան համար, որպէս և ինձ համար։ Նրա ինձ գրած երկրորդ բաց նամակը (առաջինը հրատարակված), ստացված մայիսի 5-ին, ճիշտ ինքնասպանութեան օրը, կարծել է տալիս, որ ինքնասպանութեան պատճառը եղել է զօրեղ, շատ զօրեղ և յանկարծահաս։ Յանկարծահաս եղած պիտի լինէր և ոչ նախատածած, որովհետև «Խորենացին Ե. դարի առաջին քառորդից մատենագիր» իմ գրքոյկի մասին գրելուց յետոյ թէ՝ «...կարիք չունի ներբողների, քանի որ հիմնվում էք ասկարա փաստերի վրա», աւելացում է ինձ, երևի իբրև Խորենացով հետաքրքրվողի, իր մի նոր աշխատութեան մասին։ «Վերջացնելու վրա եմ «Նախահայ լեզուի քերականութեան հնչականութիւնը», ուր, սրբազան, զարմանալի բաներ պիտի գտնէք Խորենացու օգտին... Բառերի ստուգաբանութիւնը և մի քանի հնչական օրէնքների երևան գալն ինձ համար բոլորովին անակնկալ գիւտեր եղան, որոնք բոլորը խօսում են յօգուտ Խորենացու զարմանալի հեռատեսութեան։ Ձեզ կասկածում, որ նա իր ձեռքին ունեցել է հայ հեթանոսական աղբիւրներ։ Մի ազգի ամենաաւելի պատիւը լեզուն է, եթէ մարդ այն հասկանալ և բացատրել իմանայ։ Նուաստ՝ Գ. Վանցեան»։

Հեղինակը իր այսպիսի մի գործը չը վերջացրած՝ չէր շտապի վերջ տալ իր կեանքին, իբր թէ «էֆֆեկտ գործելու համար»!!. կը տանէր աշխարհում սովորական դատնութիւնները գոնէ առժամանակ ևս, եթէ ինքնասպանութեան մղող պատճառը չափազանց ուժգին և յանկարծահաս չը լինէր։ Իսկ եթէ ընդհակառակը նախատածված է եղել, այս դէպքում ուրեմն նա ցանկացել է, որ իբրև կտակ՝ իր վերջին այդ աշխատութեան մասին գոնէ հետաքրքրվող մէկին յայտնված լինի՝ որպէսզի չը կորչի կամ ուրիշի սեփականութիւն չը դառնայ։

Հանգուցեալ Գ. Վանցեանի մերձաւորները պատասխանատու են և պարտաւոր հաշիւ տալ նրա անտիպ երկերի մասին ի գիտութիւն ընթերցող հասարակութեան։

Բարդ. եպ. Գէորգեան

—

Պրուսիա (Ստաւր. ն.), 11 յուլիսի

Պ. Մանդինեանի բաց նամակը «Մշակում» կարդացի։ Առ այժմ յայտնեմ միայն այսքան. նախ՝ ինչ-ինչ պատճառներով ճեմարանը դեռ չէ ստացել սինոդից բժ. Տիգրանեանի գումարների պակասները. յետոյ՝ ճեմարանի գումարների մի քանի դասագրքեր դեռ քննադատների մօտ են։ Հարցը վերջնականապէս կը լուծվի միայն աշնանը։ Իսկ եթէ պ. Մանդինեան ուզում է յետ ստանալ իր աշխատութիւնները, խնդրեմ բարի լինի դիմելու ճեմարանը, որտեղ բարի լինի դիմելու ճեմարանին, որին բանի քարտուղար պ. Բոչարեանին, որին դրանի քարտուղար պ. Բոչարեանին, որին դրանի քարտուղար պ. Բոչարեանին, որին դր

ներին ևս մասնակից անել «միութեանը»։ Ճիշտ է, ուսուցիչների «միութիւնը» (ինչպէս անունն էլ ցոյց է տալիս) միմիայն Կոլկաթա հայ ուսուցիչների միութիւնն է, այսինքն տեղական բնոյթ ունի, բայց Պարսկաստանի դպրոցական շրջանը Կովկասից դուրս համարելը միտք չունի մեր կարծիքով, որովհետև—նախ՝ Պարսկաստանի ուսուցիչները թէև այնքան շատ չեն, որպէսզի անհրաժեշտ հարկ զգացվի առանձին միութիւն կազմելու, երկրորդ՝ Պարսկաստանի հայ դպրոցներում դասաւանդութիւնը կատարվում է կովկասահայ բարբառով, և երրորդ՝ Պարսկաստանի հայ դպրոցների ուսուցիչների մի մասը (երբեմն նոյնիսկ խոշոր մասը) կովկասցիներ են լինում սովորաբար։

Ցանկալի է, որ Կովկասի հայ ուսուցիչների և վարժուհիների միութեան կենտրոնական վարչութիւնը լրագրութեան միջոցով պատասխանէ մեր դիմումին։

Ուսուցիչ Ա. Աթայեան

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆԸ

իբրեւ բանաստեղծուհի

I

Գրական քննադատութիւնը խախտում գիտութիւն էլ չէ, նրա համար էլ չէ, որովհետև ենթարկված է զանազան պատահարների, տարբեր հոսանքների և վերջապէս այս կամ այն հանճարեղ գեղարուեստագէտ գրողի ու քննադատի քմահաճոյքին։ Բայց այս անհատները ինքնաբոյս չեն, նրանց գրական քմահաճոյքը սովորական բնաւորութիւն չունի, այլ կեանքի առաջացրած պահանջների թարգման կամ արտայայտիչ արտօնեալ տաղանդներ ու հանճարներ են, իսկ քմահաճոյքը՝ իդէալների ու որոշ տրամադրութիւնների հեղեղ։ Միտքը արթնանում է, ժամանակաւոր կաշկանդված դրութիւնից ելնել է ուզում, տենչում է թեւակոխել այլ բարձրութիւններ՝ այնտեղ հանգչելու համար, որպէսզի նորից թռիչքներ անի, աշխարհահայեացքը նորից ընդլայնի նորանոր գաղտնիքներ բանալու համար։ Հանգիստ չէ գտնում և մարդկային հոգին, նա էլ ունի բազմաթիւ պահանջներ. երկար մնացած ու անտանելի դարձած դրութիւնից կամայ ակամայ ստիպված է լինում փընտռելու նորը, թարմը, բաւականութիւն պատճառողը։ Եւ այսպէս մարդու էութիւնը կազմող երկու անբաւական դրութիւններ նորոգվելու, թարմանալու ժուռմով կերպարանափոխ են անում ամբողջ ներքին աշխարհը։

Գրական դպրոցները մարդկային ներքին աշխարհի կերպարանափոխման լաւ ապացոյց կարող են լինել, երբ կաշկանդված մտքի ազատմամբ և առաջխաղացմամբ փոխվել է հոգին, զգացմունքը և նոյնիսկ ճաշակը։ Վերածնութեան զուգընթացաբար առաջ եկաւ կլասիցիզմը իր փայլուն ներկայացուցիչներով և որոշ հրահանգներով։ Գերմանիայում մետաֆիզիկան յաղթող հանդիսացաւ տալով գրականութեան այլ բնաւորութիւն. այս աշխարհահայեացքի ծնունդ հումանտիզմը Գերմանիայից դուրս ամենքի տեփականութիւնը դարձաւ։ Յետոյ Ֆրանսիայում պոզիտիվիզմի ազդեցութեամբ գրական ուրիշ դպրոց առաջ եկաւ. այդ նատուրալիզմն էր, որը էլի իր թեւերը բանեց բոլոր երկիրների վրա, տալով հանճարեղ գրողներ և թէորետիկներ։ Այնուհետև իդէալիզմ փիլիսոփայութիւնն է, «որ խմորել է նորագոյն սիմբոլիստական, գեղագիտական տեսութիւնը» (Բանբեր Դրակ.)։ Ամառնակ կեանքը, անորոշութեան մէջ ընկած միտքը դրանից էլ դժգոհ է։ Նոր հովեր են փչում, սոցիալիզմն է իշխում, դրա հետևողական էլ գրական շարժում է ստեղծվում։ Եւ այսպէս անվերջ, մտքերը պիտի յուզվին, զգացմունքները պիտի պղտորվին, ճաշակները փոխվին և ամեն անգամ էլ իրանց հետևից քաշ պիտի տան, իրանց ճաշակին պիտի բերեն հասարակութեանը։

Թէ ներքին և թէ արտաքին կերպարանափոխման ձևերը տիրում են բոլոր երկիրներին, իրանց ազդեցութիւնը տարածում հեռաւոր վայրերում, առաջադիմութեան ուղեցոյց դառնալով մեզ նման փոքրիկ կեանք, գրականութիւն ունեցող ազգութիւնների համար։ Ի հարկէ, մենք ոչ ստեղծելու ոյժ ունենք և ոչ էլ ուղղութիւն տալու կարողութիւն, որովհետև ընութիւնը ժլատ է եղել մեր նկատմամբ, այլ դրա փոխարէն ունենք ընդօրինակելու շնորհք. և մենք ընդօրինակում ենք փառաւոր կերպով, արտաքինը անմիջապէս, իսկ ներքինը՝ բովանդակութիւնը շատ ուշ, այն էլ միջնորդապէս, բայց աղաւաղված ու աղճատված ձևով։ Մենք շատ ենք իրացնում, այսինքն միայն այն ժամանակ, երբ օդը արդէն գրանով յագեցած է և մենք ակամայից ըստիպված ենք շնչել։ Այդ պատճառով է, որ երբ Եւրոպայում բոմանտիզմը իր վերջին փայլուն շրջանի հանճարեղ ներկայացուցիչներն էր տալիս, մեզ մօտ աշխատում էին կլասիցիզմի կոթողներ ստեղծագործել, և այդպէս էլ միւս դպրոցների նկատմամբ։ Այժմ էլ երբ արևմուտքում առաջ են եկել զուրջ հոսանքներ՝ իմպրեսիոնիզմ, դեկադանս, սիմբոլիզմ, միստիցիզմ և այլն, մենք, եթէ ի նկատի չունենանք արևմտեան ու արևելեան մի երկու բանաստեղծ, դեռ իրանց նէյնիմներն են շարունակում, Ալագեազի գովասանքներն անում, քաջերին բոմանտիկ երկրպագուներ հանդիսանում։ Աչքերի նոյն աղուղական գովքը, նոյն երգերը կոնվենցիոնել ձևերով արտայայտած և տաղտկալի են և անզօր թէ ճաշակին և թէ մտքին բաւականութիւն տալու համար։ Ցաւալին այն է, որ մի վարդի սիրահար մեր բանաստեղծները՝ արձակ թէ չափածոյ գրողները երբ փորձում են մի քիչ հեռու թռչել, երկինք սաւառնել վեհութիւն տեսնելու համար, կորցնում են իրանց ոյժը ու բոլորովին անգոյն ու անհոտ դառնում։ Հնարից, ուրեմն, դժուար է ապասել նոր արշալոյսի նոր երգեր, նոր շեշտեր ու յուզումներ. յոյս պէտք է դնել նորեկների վրա, որոնց մէջ քիչ թէ շատ շնորհքով, վառ երևակայութեամբ անհատներ են երևում։ Դրանցից մէկն է Շուշանիկ Կուրղինեանը, որը թէև վաղուց է սկսած գրել, բայց այս տարի միայն ասպարէզ եկաւ բանաստեղծութիւնների ժողովածուի Ա. պրակը հրատարակելով։ («Արշալոյսի զոլանջներ», 1907 թ., Ն.-Նախիջևան, տպ. Ս. Աւագեանի, Ա. պրակ, էջ 64)։

II

Կուրղինեանը մի փոքրիկ, բայց շնորհալի բանաստեղծ է. թէև նա չէ տարված վերջին հովերով, որովհետև ամբողջ երգերի մէջ մի տող անգամ չէ նուիրած կամ չէ արտայատած նորեկ շեշտերով, բայց և այնպէս հեռու է վերոյիշեալ նէյնիմներից, չը նայած որ երբեմն Իսահակեանի ազդեցութեամբ և այդ բովանդակութեամբ գրել է մի քանի ոտանաւորներ, այն էլ անաջող, և այդ պատճառով էլ այդ փոքրիկ պրակի մէջ փոթորկալից ու ըմբոստ ոգու արտայայտութիւն կրող երգերի հետ տեսնում ենք գարդերի ու սիրոյ սովորական տաղեր։

Եթէ ի նկատի առնենք գեղարուեստի մասին եղած այն ճիշտ որոշումը, թէ «գեղարուեստը իր նշանակութեամբ կեանքի մեծ ֆունկցիան է, որի սպեցիֆիկ յատկութիւնը էստետիկական մտածողութիւնն է... նպատակը՝ կեանքի մեկնութիւնը և պարզաբանութիւնը... միակ պարտականութիւնը՝ գեղեցկութիւնն է... իսկ իրաւունքի տեսակէտից անսահման է, որովհետև ներկայացնում է ամբողջ կեանքը», այն ժամանակ իրաւացի և արդարացի են մեր բանաստեղծի ուշացած այն երգերը և այնպիսի թափով արտայայտված, որպիսին նախորդները չեն արել։ Գեղարուեստը ոչ թէ պիտի ծառայէ միայն բարիքի, այլ ընդհանրապէս կեանքի նպատակների համար և պիտի զբաղվէ ոչ թէ մարդկային ոգու որևէ առանձնայատուկ կողմով, այլ մարդկային ոգով ընդհանրապէս և նա ազատ պիտի լինի, որպէսզի գրկի ամբողջ կեանքը, հակառակ դէպքում կը դառնայ չնչչնական՝ երեխայական խաղալիք և կամ թէ չէ ճիպոտների և գովասանական թերթերի նման ժամկավարժական նորահնար մի միջոց, ինչպէս ուսաց գեղարուեստագէտ քննադատներից մէկը։ («Совр. Міръ», 1906 г.)։

Ինչպէս երևում է, ընութիւնից լիառատ վարձատրված մեր բանաստեղծն ևս սիրում է այդ ազատութիւնը և աշխատում է հետևել։ Նա չէ ուզում շենձու լինել, պատուէրով երգեր հիւսել, այլ արտայայտում է իր բոցավառ որտի այն յոյզերը, որ պահել չէ կարողանում, սրից նա տանջվում, այրվում է։ Սրտի այդ բոնկումները՝ անողոք իրականութեան խոցոտող արձագանքները ընթերցողի վրա լաւ տպաւորութիւն կը թողնի թէ անախորժ, այդ նրա համար միևնոյն է, նրան ոչ համակրութիւնն է ուրախութիւն պատճառում և ոչ էլ հակակրութիւնը՝ տխրութիւն։

«Ինչիս է պէտք—ով չի լսում՝
Թշնամի է իմ երգին.
Ինչիս է պէտք—ով արտասվում՝
Ըմբռնում է իմ հոգին»։

Բանաստեղծն, ուրեմն, իր երգերով է զբաղված. նա իսկական երգչի նման իր գարունը և իր սիրոյնը ունի, որ ոչ մի ուրիշ բանի հետ փոխարինել չէ ուզում.

«Անլոյս աչքիս՝ լոյսը կրծքիս—
Ինձ արշալոյս, վերջալոյս,
Եւ հարազատ մրմունջ երգիս՝
Ես ուրիշներ մինչև լոյս...»

Իսկ ինչ են այդ արշալոյս վերջալոյսները, այդ մրմունջ երգերը, եթէ ոչ ներկայ յուզված կեանքի, խժորված մտքերի արձագանքները, որոնք թէ իրանց բովանդակութեան և թէ արտայայտութեան թափի պատճառով, որպիսին նախորդները չեն արել, արժանի են առանձին ուշադրութեան։ Զգայուն սիրտը, տպաւորութիւնների գերի բանաստեղծի հոգին բովանդակալից են դարձրել նրա երգերը և ջղայնացրել նրա շեշտերը.

«Ես թափն եմ սիրում լոկ մի հարուածի,
Կռիւը—լինել կամ չը լինելու.
Վէրքը—մահացու, ցանցն արկածի՝
Ուր ակնթարթն է պատասխանատու»։

Հոգու այս անվեհերութիւնը երբեմն չափ ու սահման չունի, նա նոյնիսկ ալիքների շառաչը իր հոգուն շատ ժօտիկ է ընդունում և նախանձում է նրանց ոյժին, միաբան լինելուն, որ «կտրճի նման կուրծքները դէմ դնելով մաքառում են թշնամու դէմ և ապա մի ակնթարթում փշրում՝ կուլ տալիս»։ Բանաստեղծի հոգին այնքան ցակոտ է, որ ընութեան գեղեցկութեամբ այնքան չէ ոգևորվում, որքան նրա արհաւիրքներով. նա սիրում է մրրիկ, կայծակ, որոտ, ահեղ դողդղոց, աւերակներ և նոյն իսկ վարդաթփի վրա կարծես թէ փչերն է աւելի սիրում, քան գարնան զարդ վարդը։

Բանաստեղծի այս ոչ կանոնի սիրոյ, անվեհեր հոգին են պատճառ, որ նրա երգերը հրաբորբոք են, և եթէ նիւթի պակասութիւնը չը լիներ, կարող էին այրել, բոցավառել մարդկանց սրտերը։ Այդ էլ մի մեծ թերութիւն է նրա համար, որովհետև ժայթքող, բռնկվող սրտի արտայայտութիւնների մէջ խորութիւն չենք նկատում, զայրոյթով լցված տողերի մէջ ազդեցութեան այն մեծ թափը չենք զգում և գեղեցկութեան այն համն ու հոտը չենք ճաշակում. ինքը փոքրիկ, գրկող օրիէկտը մեծածաւալ, այնպէս որ նրա ձեռքերը մնացել են օդում պարզված, որը կարող է ծիծաղ էլ յարուցանել։

Կուրղինեանի երևակայութիւնը վառ է, տպաւորութիւն կրող,—յատկութիւններ, որ անպայման հարկաւոր են մի բանաստեղծի, բայց մտքով և ճաշակով տհաս և աշխարհահայեցողութեամբ սահմանափակ,—գծեր, որ փոքրացնում, աննշան են դարձնում մի երգչի։ Չը նայած այս բոլորին, Կուրղինեանը իր նոր թեմաներով կարողանում է որոշ ազդեցութիւն թողնել ընթերցողի վրա, բայց այդ էլ շնորհիւ այն հանգամանքի, որ ամենքս տրամադիր ենք այդ երգերը լսելու։ Ինչպէս խաւարում ապրողի համար լուսոյ շողերն անգամ կենդանութիւն են պատճառում, յուսոյ նշոյլներ ծնեցնում, այնպէս էլ ստրկութեան ժամանակը, բիրտ ոյժի գերի դարձածը ազատութեան հովերով բռնված այդ բովանդակութեամբ ամեն մի շեշտ ազատութեան օրհներգութիւն է համարում...

Կուրղինեանի բանաստեղծութիւնների մէջ գերակշռողը քաղաքական - հասարակական խնդիրներն են և ոչ զգացմունքի զանազան ելևէջները. սոխակի նման լեզուն բացվել է այն ժամանակ, երբ գարնան հովեր են փչել, երբ վարդն է բացվել և ահա տեսնում ենք նրան «ազատութիւնը» հոլովելիս ամեն ձևերով, ինչպիսին արվում է այժմ կեանքի ամեն մի քայլափոխում։ Նա յոռետես չէ, յոյս ունի որ վերջի վերջոյ, այն էլ շատ մօտիկ ապագայում, ազատութիւնը յաղթութեամբ պիտի պսակվի. այդ պատճառով էլ արհամարհանքով անէծք է կարդում անարգ շղթաներին, որոնք փշրվելու, լուծվելու վտանգին են ենթարկված.

«Ա՜խ սև շղթաներ, անարգ հանգոյցներ,
Դուք բիրտ կարգերի և՛ ոյժ և՛ տա-
ղանդ—
Իմ կրակ սրտիս իղձըն անձնուէր
Մոլի բռնութեան դրել էք պատանդ։
Ա՜խ սև շղթաներ, ժանգոտ օղակներ,
Դէհ զնգզնգացէք հիմը յաղթական՝
Այն լոյս օրերի հիմքն անվհեր
Եւ ձեր գարշելի ողբերգը մահուան...»

Բանաստեղծը ոգևորված է այս նոր ծագող արևով, նրա կենսատու շողով և հրաւիրում է նրան դիմաւորելու, ստուարացնելով ու խտացնելով «անձնուրացների» շարքերը, որոնց մէջ առաջին տեղը տալիս է բանւորներին, ճիշտ այնպէս, ինչպէս եղաւ և կայ իրականութեան մէջ.

«Այդ մենք ենք գալիս—
Մաշուած բահկոններ, իւղոտ ու մրոտ,
Տրորուած գոտակ, աղտոտ մաղերով,
Մեծ մասամբ գեղնած, գծուծ և բոկոտ,
Երբեմն դժգոյն, երբեմն անխռով,
Երբեմն քաղցի, լուռ տառապանքի
Սև կնճիռների անջինջ կնիքով,
Երբեմն ըմբոստ արհամարհանքի
Անզուսպ զայրոյթի վրէժի թոյնով.
Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցաւից
Լոյս թարմ օդի տենչանք դէմքերիս
Ու մարդավայել ապրելու յոյսից
Դեռ խոր վէրքերի կսկիծ սրտերիս»։

և այն էլ ինչպէս՝

«Կրծքով փշրելու փառքը տիրողին—
Դահը բռնութեան—ստրուկի շղթան,—
Նոր ուղի հարթել մեր նմաններին,
Արժանի կոչման—հաւասարութեան»։

Բայց իրականութեան մէջ միայն «բռնութեան գահի» դէմ չէին կռուում բանւորները։ Կապիտալիզմի այդ ոխերիմ թշնամիները, գժգոհ իրանց կեանքից, շահագործվելու դէմ էին դուրս եկել, կոչ, աղաղակ բարձրացրել։ Բանաստեղծը այս դէպքում ևս սառնասիրտ չէ եղել. նա խստասրտութեամբ բողոքում է («Հանգցրէք ջահերը», էջ 42) հարուստների դէմ, որոնք աշխատաւոր դասակարգի արիւն-քրտինքով բարձրացրած պալատներում ուրախ, զուարթ տօն են կատարում առանց կարեկցելու, առանց ժամանակից անելու քաղցածներին, անտէրներին, որբերին, որոնց թշուառութեան պատճառ են եղել։ Լցված սիրտը այլևս չէ կարողանում տանել այդ ակնյայտնի անարդարութիւնը, ուզում է, որ նրանց ուրախութիւնը թունաւորվի և ամեն անգամ ուրուականների տեսքը նրանց քաղցը ժամերը դառնացնի։

Բայց բանաստեղծը միայն կանացի անէծքներով չէ բաւականանում. նա մարտահրաւէր է կարդում այն ամենքին, «որոնց արտում դեռ մարդկային կոչման արժանի, գէթ մի նշոյլ անմեկին թրթռում է տանջանքների բովի մէջ, որոնց սրտում դեռ բռնութեան աւրող ձեռքից իդէալներ կը մնան»։ Եւ վստահ է, որ շարքերը հետզհետէ կը ստուարանան, որովհետև նոյնիսկ թշուառ ու վախկոտները եկել են այն եզրակացութեան որ այլևս վիզ չը պիտի խոնարհել, այլևս չը պիտի սողալ։

Ըմբոստ ոգին դարերի սրբագործված ներքին համոզմունքի դէմ ևս բողոքում է ուժգին թափով։ Նա ցաւում է, որ իր հարազատ ժողովուրդը դարերը քնից չէ զարթնած, տգիտութեան և յուսախաբութեան մէջ մնալով՝ մինչև այժմ էլ խաչ ու մասունքի երկրպագու է, մինչև այժմ էլ ցնորքներով է ապրում։ Ճշմարտութիւնը պարզված է բանաստեղծի համար, գաղտնիքը բացված, և ահա նա այդ սրբութիւն կոչվածները մարդկութեան շատ թշուառութեան պատճառ ընդունելով, «յետ տար քո խաչը» կանչում է զայրացած ու դառնացած այն քահանային, որը, ըստ սովորութեան, սինի վրա բարձրացրած թշուառ դատապարտեալին գնացել էր «հաժբուրել տալու հաւատի շղթան».

«Յետ տար քո խաչը—գործիքն յարմար
Անվերջ կեղծիքի, լպիրշ քսութեան.
Անխախտ պատճառն—արուած ոտնա-
հար
Աժեն մի տենչի թշուառ մարդկութեան։
Յետ տար մոլեռանդ, անմիտ ու անհամ
Կեղեքիչների զէնքը—քառաթև՝
Որ պաշտուեց երկար, երբ ամեն ան-
դամ
Տնքում էր մարդը—մաքով կոյր, ան-
թև՝»...

Բանաստեղծի համար նոր խաչ է ստեղծվել։ ինչպէս հին ժամանակ անարգ խաչը, այժմ էլ անարգ սիւնն է նրա սրբութիւնը, իսկ ազատութեան զինուորը՝ սիւնին դատապարտվածը՝ նոր առաքեալ, նոր փրկիչ, որոնք մարտիրոսվելով պիտի փշրեն կուռ շղթաները, պիտի քանդեն ազատութեան դէմ կանգնած խարխուլ պատնէշը։

Այսպէս ուրեմն ազատասիրտ մտաւորի քարոզները, ներկայ ալէծուփ կեանքի պահանջները ըստ հնարաւորութեան արձագանք են գտել Կուրղինեանի բանաստեղծութիւնների մէջ, յաճախ մեծ թափով, իսկ երբեմն էլ, մանաւանդ կոնվենցիոնալ ձևով արտայայտած հրաւէր ու կոչեր՝ (կանանց կուռ հրաւէրը, երիտասարդներին ժողովրդի մէջ գործելու հրաւէրը և այլն) մակերեսութիւնն են և ոչ մի տպաւորութիւն չեն թողնում. այդ բովանդակութեամբ տողերը չոր են և անկենդան և կարծէք մոդայի համար են գրված։ Այդպէս չոր են և սիրոյ վերաբերեալ երգերը, որ շատ չնչին տեղ են գրաւում (տողեր միայն) այս հատորիկի մէջ։ Բանաստեղծը կամ սէր երգել չը գիտէ, կամ աշխատում է իր կոչումը ուրիշ բանի մէջ փնտռել, բայց այն ժամանակ հեռու պիտի մնայ Իսահակեանի ազդեցութիւնից։ դրա համար կան հնչց. օր. ռուս շատ տաղանդաւոր բանաստեղծներ նորագոյն թարմ ոգով, նոր հովերով բռնված։

Գալով բանաստեղծութիւնների արտաքինին, պիտի խոստովանել, որ տեխնիկայի կողմից շատ խեղճ է, թէև այդ չէ խանգարել, որ նա գործ ածած լինի գեղեցիկ պատկերով դարձուածքներ, երաժշտական կտորներ. և տեղ-տեղ եթէ ուզեցել է ուշադրութիւն դարձնել, զգացմունքը խեղդվել, սահմանափակվել է։ Գործ է ածում սովորաբար 5, 5—5, 5 և 4, 4—4, 3 վանկերով տողեր։ Ցենզուրաների, շեշտերի կանոնաւորութեան համար խօսելը աւելորդ է, որովհետև սա ևս վարակված է մեր բանաստեղծներից շատերի պատով, բայց այս պակասութիւնները ժամանակի ընթացքում կարելի է ուղղել, չը նայած որ մեր բանաստեղծուհին այդ կողմից անշնչան առաջադիմութիւն է արել։

Պէտք է մաքին նիւթ տալ, աշխարհահայեացքը ընդլայնել, պէտք է զգացմունքը կրթել, ճաշակը զարթեցնել, մի բան, որից զուրկ է մեր բանաստեղծուհին, իսկ այդ ձեռք է բերվում ընթերցանութեամբ և գեղարուեստի տաճարներ այցելելով...

Աւ. Տէր-Ցարութիւնեան

ԱՐՏԱՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

—

Կահիրէ, 10 յուլիս (Ն. տ.)

Տարաբաղդ Արփիարի սպանման գործիքը եղող Պետրոս Հիւսէյնեանին և կամ իր ճիշտ անուամբ՝ Յովսէփ Ալիփուռարեանին դատաւարութեան վերջանալը՝ իժացած կըլլաք անշուշտ։ Առերևոյթ մարդասպանը՝ ինչպէս կենթադրկուէր արդէն՝ դատապարտուեցաւ մահու պատժի։

Այսպիսով ահա վերջ կը գտնէ՝ գէթ օրինաց հանդէպ՝ հայ անունը, հայ զգացումները վիրաւորող սոյն ամենատոր ոճրագործութեան առաջին հանգրուանը։

Գործին կարևոր դէմքը—Արփիարը—դժբաղդաբար առյաւէտ մէջտեղէն վերցուած ըլլալէն ետք, ճիշտն ասած, մեզ նուազ կը հետաքրքրէ այլ ևս անոր սպանման լոկ շաբաղուշակ գործիքը եղող անձնաւորութեան—տգէտ, ինկած հրէշ մը, եթէ «Արփիարի սպաննիչը» անունը բաւական չըլլար—վիճակուած վախճանը։

Եւ անգամ մ'ալ դառնագին զգացմամբ մէջ որ մարդս ակամայ կը մղուի խորհիլ՝ թէ մեր ազգասպանները իրենց աւերիչ դերը օրքան խորին գիտակցութեամբ մը ըրած են ու կընեն։ Ու տրտմաթախիծ կը տեսնէ Ունճեաններու, Թավշանճեաններու և անման Արփիարը անհետացնելու ծառայող կոյր գործիքները, այդ կոչտ, տգէր և ըրբաւոր բէժիմին սպաննիչ լուծին տակ այլանդակուած, այլասերուած ուղեղները գըտնելու, երևան բերելու և գործածելու իրենց ցայտուն ընդունակութիւնը։

Արդարև բաւական է Հիւսէյնեանի տխեղծ դէմքին նայիլ, համոզուելու համար թէ նա ինչ տխուր նպատակներու լոկ անկամ գործիք մը կրնար ըլլալ և տակէ դատ գուցէ ուրիշ ոչինչ... Տարբեր պարագայի մը տակ երբ այդպիսիները ուրիշներուն ղեկասելու անկարող վիճակի մէջ պիտի դրուէին, այժմ իրենց կեանքին գնովը կը շահագործուին՝ ազգին համար ծառայելու խարկանքով՝ ամենէն աղտոտ և զզուելի ոճրագործութիւնները ընելու, որ երբէք կարելի է խորհիլ և երևակայել...

Եւ մտածել թէ ըստ Արշակ Չօպանեանի «միակ կենսունակ յեղափոխական կուսակցութեանը» արժանաւոր ներկայացուցիչներուն միջոցաւ կը փնտռուին և կը գտնուին այդպիսիները, ազգին «հերոսներ» հանդիսանալու խոստումով, մարդս նողկանք կը զգայ պարզապէս։

Բայց ինչ որ սոյն ամօթալի և զզուելի պարագաներու մէջ յուսահատական է, այդ ալ մեր ժողովրդէն ոմանց գիտակից համախոհութիւնը, մեղաւոր լռութիւնը և քաջալերիչ անտարբերութիւնն է։ Ազատութեան համար մարտնչող ժողովուրդ մը և կամ աւելի ճիշտ՝ այդ ժողովուրդը կառավարող գործիչները, մտաւորականը այդպէ՞ս պէտք է վարուէին, ինչպէս՝ ի նախատինս հայութեան՝ անոնք ըրին ու վարուեցան, օրինակի համար՝ Արփիարին անսերելի սպանման դժբաղդ պարագային հանդէպ։

Արդարև՝ չքաշուինք խոստովանելու՝ որ Արփիարի սպաննութիւնը անդամ մ'ալ ցոյց տուաւ և երևան հանեց մեր այդ ղեկավարող առանձնաշնորհեալներէն ոմանց—ոչ քիչ դժբաղդաբար—հոգեկան ինկածութիւնը, որ ողբալի պիտի կոչէինք, եթէ մեր ներկայ դառն և ճգնաժամային օրերուն մէջ պարզապէս դատապարտելի և նողկալի չըլլար։

Ովքե՞ր են, սոյն պարագային մէջ, ճըշմարիտ յանցաւորները և ազգասպան ոճրագործները. Գարակէօզեան, Ժամկոչեան, Պալէօզեան, Ունճեան, Թավշանճեան, Տէր-Օհանեան, Աճէմեան, Արփիարը և այլն և այլն սպաննող անմիտ և խեղճուկ գործիքները. հերոսացման դաբնիներու կարօտ այդ այլասերուածները, թէ ոչ ատոնք ըլլայ ուղղակի զինող-ժողովները, ըլլայ իրենց նեխած սրտին ծածկուն հաւանութեամբ և անտարբերութեամբ քաջալերողները։

Եթէ Կահիրէի տեղական դատարանը, իր օրէնքներուն սահմանին մէջ, ոճրագործը մահուան դատապարտելով իր պարտքը կատարած և լմնցած եղաւ, կը մնայ անդին սակայն ազգին մեծ դատաստանը, որ նոյնպէս պէտք է իր վճիռը արձակէ ճշմարիտ յանցաւորներուն և անոնց յայտնի թէ լուռ քաջալերողներուն դէմ, իր անունը, արիւնը, կեանքը, պատիւը և ազատան սպաննող և վտանգող անձանց, թէկուզ գիտակից մտաւորականներուն դէմ։

Երբ Վենետիկի Մխիթարեանը, իրենց միաբանութեան ներքին ապականութիւնը, զեղծումները մաքրելու անկեղծ զգացմամբ գրուած յօդուածներու պատճառաւ իրենց նախկին և պատուաբեր աշակերտին եղերական մահուան հանդէպ ոսկի լռութեամբ մը իրենց բովանդակ կազմին ներքին տխեղծուելութիւնը երևան հանեցին, ցաւեցանք, բայց չզարմացանք։

Երբ երկար լռութենէ մը վերջ Չօպանեան «Անահիտի» մէջ իր ծանօթ սովորութեամբ պայմանական և փաստաբանօրէն ցաւակցութեամբը (?) մէջտեղը ելաւ, որպէսզի, այժմ և օրին մէկ, իրեն դիմող այլազաններուն այլազան պատասխաններով կրնայ ըսել թէ «այո, ես ալ այդպէս չըսի», ուրիշի մը՝ «ես ալ այդպէս չըսի», և հետզհետէ մինչև արդուականներուն... թէ «ձեզ համար Արփիարը սպաննելնէդ վերջ ալ կենսունակ կուսակցութիւն մը չըսի» և այլն և այլն,—նորէն մեզ զարմանք չպատճառեց. ատիկայ իր ոճն էր, իր ձևն ու ոգին, այնքան յարմար և արժանի զայն կերտողին։

Բայց ինչպէս բացատրել օր. համար՝ Փօրթուգալեանին, Լէօին, Ա. Ահարոնեանին և նման մտաւորականներու, գործակիցներու և մինչև իսկ (բացի վերջինէն կարծեմ) գոնէ երբեմնի դաղափարակիցներու անտարբերութիւնը, լռութիւնը։

Ի՞նչ, Փօրթուգալեանը գէթ Արարատեանի, Մխիթարի շրջաններէն Արփիարին հետ ունեցած շփումն ու գործակցութենէն բան մ'իսկ պահած չէը՝ այսօր ազգասպաններուն երեսին շպրտելիք զզուանքին հետ և թաց ու արիւնոտ գերեզմանին առաջը անոր յիշատակին ընծայելու...

Եւ Լէօն։ Մինթ իր յօրելեանին յաջողութիւնը չվտանգելու նպատիր մտահոգութիւնը և ի հեռուէն «Մշակին» անոր կազմակերպութիւնը իրենց հովանւոյն տակ առնողներուն տհաճութիւն պատճառել չուզելը այնքան զօրեղ էին, այդ գրողի մէջ ալ ողջմտութիւնը և արդարութիւնը խեղդելու չափ։

Ահարոնեան և ընկերներն իսկ կարգապահութեան հրամանին դէմ անսասան չկենալով, մաքի դէմ, գաղափարի ազատութեան դէմ եղած այս մահափորձին առթիւ խօսք մ'իսկ չգտան ըսելու... կարծես առով ծայրայեղ ազատական-ընկերվար կուսակցութեան մը գաղափարի, ուղեղի և լոյսի

դէմ հակառակորդ բոնաւոր մրցակ ապացուցանելու համար։

Այո, ըստ իս, նոյնքան մեղաւոր և դատապարտելի պիտի մնան ասոնք, որ իրենց ընթացքը պիտի սրէ և քաջալերէ կեանքի, պատուոյ և խօսքի ազատութեան մեր «ազատական» թշնամիները։

Կահիրէի դատարանը իր դատապարտութեամբ չի վերջացներ այս գործը։ Ժողովուրդը պէտք է լուծէ զայն՝ ճշտելով պատասխանատուութիւնները և թելադրելով հարկաւոր դարմանները։

Արփիարին նման անմեղներու արիւնը զուր չպէտք է երթայ։ Երբ մենք կը կանգնինք և կընդվզինք մեր թշնամեաց կոտորածներուն դէմ, չենք կրնար թող տալ որ մեր մէջէն վիժածները, մեր մաքուր ուժերը—նիւթական, մտաւոր—ոչնչացնելով ազգը անդամալուծեն և թշնամւոյն հետ և անոր գլուխը կանգնած զայն կոբստեան դահավիժեն։

Եւ ատոր համար ազգին գիտակից մասին միահամուռ և անվերապահ աջակցութեան պէտք ունինք։ Տատամսումը և անտարբերութիւնը այս պարագայի մէջ հոմանիշ պէտք է ընդունիլ մեղսակցութեան։

*

Արփիարին դատավարութիւնը ուրիշ կարևոր միջադէպի մը ևս պատճառ տուաւ։ բան մ'որ կրնայ քաղաքական ծանր հետևանքներ ունենալ հայերուս համար։

Զարէհ Քօչեան, Արզուեան տխրահռչակ դէմքերէն մին, որ թէև բանտարկուած էր, բայց փաստերու չգոյութեամբ ազատ արձակուեցաւ և ոստիկանական կարգադրութեամբ Եգիպտոսէն արտաքսուեցաւ։ Այժմ կըսուի որ Իզմիր գացած և թիւրք իշխանութիւններէն ձերբակալուելով Պոլիս ղրկուած է։ Խնդիրը սկզբունքի շուրջ է։

Ոմանք կըսեն թէ եգիպտական կառավարութիւնը յանձնել ուզած ըլլայ օսմանեան իշխանութեան, ինչպէս որ ուրիշներ ալ կըսեն թէ յունական կառավարութիւնը ուզած չէ ընդունիլ անիշխանական հանցարելով զայն։

Վերջին առարկութիւնը որ աստիճան ճիշտ է, յայտնի չէ մեզ։ Իսկ եթէ կառավարութիւնն է որ Քօչեան թիւրքիոյ յանձնուելու համար Իզմիր ղրկած է, ատկէ ծանր պարագայ մը կը ծնի։

Երբ այսօր Քօչեան մը կը յանձնեն, ինչ ապահովութիւն որ վաղը թիւրքիոյ խընդրանաց վրայ օսմանեան ուրիշ հպատակները ևս չյանձնուին անոր։ Եգիպտական օրէնքը կը տրամադրէ այդ յանձնումը և ինչ պարագայից տակ։

Ցամենայն դէպս կարժէ որ այս բանը խնդրոյ առարկայ ըլլայ և նոյնիսկ տեղւոյն կառավարութեանը դիմումներ ընելով բացատրութիւններ ուզուին։

Մին

«ՄԵՂԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

15 յուլիսի

ՄՕՍԿՎԱ, Քաղաքային վարչութիւնը առաջադրութիւն է արել հաստատելու Շանեավսկու անունով հիմնված ժողովրդական համալսարանի հոգաբարձական նախագահի պաշտօնում պրոֆեսոր Բօտին։

ԿՕՍՏՐՕՄԱ, Կինեշմում երևան է հանված սոցիալ-դեմօկրատական կազմակերպութիւն լաւ կահաւորված տպարանով։ Կալանաւորված են 21 հոգի։ Գտնված են տպարանական տառեր և բազմաթիւ անլեգալ գրականութիւն։

ՊԷԿԻՆ, Եկաւ ռուս ճանապարհորդ բարոն Մանների հէյմը Արևմտեան Չինաստանում երկաթեայ ճանապարհորդութիւն կատարելուց յետոյ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Ժողովրդական լուսաւորութեան ժինիստրութիւնը թոյլատրել է կանանց բժշկական ինստիտուտը մտնելու համար լրացուցիչ քննութիւններ տալու ժամանակ ազատել լատիներէն լեզուի լրացուցիչ քննութիւնից այն անձանց, որոնք այդ քննութիւնները տուել են ժինիստրական այն շրջաբերական առաջարկից յետոյ, որ հրատարակված է 1908 թուի մարտի 22 ին։

ՆԻԺԵԳՕՐՕԴԵԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌ, Նահանգապետի, զանազան տեսչութիւնների ներկայացուցիչների և առևտրականութեան ներկայութեամբ բացվեց տօնավաճառը։

ՕԴԵՍՍԱ, Դիշերը տեղացող յորդ անձրևը հեղեղեց քաղաքի ցածր մասերը։ Ջնջվել են կենտրօնական փողոցները. Դերիբասովսկում շատ տեղերում տների ներքին յարկերը ջրով լցվել են։ Խոշոր ջնջներ են եղել մանաւանդ Նաւահանգստում. Խերսօնսկայա փողոցում խեղդվել են ձիաքարշի 31 ձիեր. մի քանի տեղերում ջուրը բարձրացել է մօտ 2 արշին։ Վնասները մեծ են։

ԲՕՄԲԵՑ, Զօրքերը, որոնց վրա ամբոխը երկար ժամանակ քարեր էր նետում, համարձակ տուին։ Խռովարարներից 3 հոգի վիրաւորված են, որոնցից երկուսը ծանր կերպով։ Նահանգապետը մի ճառով դիմել է յայտնի քաղաքացիներից հրաւիրված ժողովին, յայտնելով որ կառավարութիւնը, որը մինչև այժմ ոչ մի աջակցութիւն չէ ստացել նրանց կողմից, հրաւիրում է նրանց անհրկիզ կերպով հանդէս գալ պաշտպանելու օրինականութիւնն ու կարգապահութիւնը։

ԿԻԵՎ, Հազարաւոր բազմութեան ներկայութեամբ, Պետերբուրգի, Կիևի և Մոսկվայի միտրոպոլիտները, արքեպիսկոպոսների ու միւս հոգևորականութեան մասնակցութեամբ, հոգեհանգիստ կատարեցին Սոֆիայի և Վլադիմիրեան տաճարներում ի յիշատակ սուրբ Վլադիմիրի և ռուսների մկրտութեան։ Մեծ շուքով կատարված հանդիսի ժամանակ արձակվեն 101 անգամ թնդանօթներ։

ՕԴԵՍՍԱ։ Զինուորական նահանգական դատարանի դատավճռով կախաղանի են հանված 5 հոգի բանտից փախչելու նպատակով պաշտօնական անձանց վրա յարձակվելու և վերակացուին սպանելու համար։ Երկուսը՝ Գօլտա գիւղի վրա զինված յարձակում գործելու համար, որի ժամանակ չորս հոգի վիրաւորված են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻՍՄԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԵՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻՍՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵՔՇԱԲԹԻՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միքիրտչեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Բօսսիա»։
(ա. օ.) 100—84

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
Ներքին եւ ջղային
հիւանդութիւն ունեցողներին
Պեատիգորսկում, Վերի բուլվար № 14, տ. իշխ. Գիրէի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—27

ՈՐՈՎՀԵՏԵՒ Անդրկովկասի դիւղացիները
յաճախ դիմում են Միութեան Հողային Մասնաճիւղին խնդրելով իրանց կարիքները ծածկելու համար գնել հողային բաժիններ, ուստի և Մասնաճիւղս սրանով յայտնում է, որ այն
ՀՈՂԱՏԷՐԵՐԸ,
որոնք ցանկանում են ծախել իրանց կալուածքները,
պէտք է դիմեն այդ մասին յայտարարութեամբ Բ. Հ. Կ. Միութեան գրասենեակը (Красноводская ул. д. И. Д. Адамова), որը անկողմնապահօրէն կը միջնորդէ վաճառողների և գնողների միջև։
(հ. շ. ե.) 3—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ներսէս քահանայ Հերբեւցեանի
«ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ»,
«ԵԿԵՂԵՑԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ»
աշխատութիւնը
Գինն է 60 կօպ.
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гутенбергъ“,
կամ
Հեղինակին՝ Романовскій хуторъ, Куб. обл. священнику Н. Эртевціану.
(ե. հ.) 2—2

ՂԱԶԱՐԻ ՀԱՅՈՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ 1908—9

ուսումնական տարում

ՀԱՐԿԱՒՈՐԵՆ

մի աւագ ուսուցիչ, որը աւագութեան և շաբաթական 20 դասի համար ստանալու է ընդամենը 1000 ր., նաև չորս փորձառու ուսուցիչ-ուսուցչուհի—հայոց և ռուսաց լեզուից, թւաբանութիւնից, բնական պատմութիւնից և աշխարհագրութիւնից։ Դասագիրը 30-ական ռուբլի է։ Դիմողները պէտք է ունենան առնուազն հայոց կամ պետական միջնակարգ դպրոցների աւարտման վկայական։ Ցանկալի է, որ թւաբանութեան և բնախօսութեան ուսուցիչը լինի մասնագէտ գիտնական, որպէսզի բարձր դասարաններում կարողանայ տեսականապէս և փորձնականապէս աւանդել այդ գործութիւն և գինեգործութիւն. այդ դէպքում՝ բացի դասերի համար յատկացրած ռոճիկից՝ կը ստանայ նաև 250 ռուբլի։
(հ. շ. ե.) 3—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ԳԱՆՁԱՐԱՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Զհանեանցի
Церковная ул. д. № 11. (близъ памятника Воронцова)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երեքեակ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այդտեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. ժ.) 20—6

ԹԻՖԼԻՍԻ 1, 2 և 4 ՐԴ ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
արանով յայտարարում է,
որ բոլոր վերոյիշեալ գիմնազիաներում եկող ուսումնարանական տարվանից բարձրացվում է ուսման վճարը տարին 10 ռուբլով բոլոր դասարաններում, բացի VIII-ից։ Ուստի գիմնազիայի աշակերտուհիները, սկսեալ այրուբենական դասարանից մինչև III դասարանը պէտք է վճարեն 75 ռուբլի, IV դասարանից սկսած մինչև VII-ի աշակերտուհիները պէտք է վճարեն 85 ռուբլի, իսկ VIII դաս. աշակերտուհիները 100 ռուբլի տարին։
Նոր մտնող աշակերտուհիները պէտք է մտցնեն ուսման վճարը վերոյիշեալ չափով 1908 թ. սեպտեմբերի 1-ից, իսկ արդէն գիմնազիաներում սովորողները 1909 թ. յունվարի 1-ից։
(յուն. 17, 18 և օգ. 15) 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Սրանով յայտարարում է, որ հինգշաբթի, յուլիսի 25-ին, յերեկվայ ժամը 12-ին նշանակված է
ԱՃՈՒՐԴ
Ընկերութեան վրա մնացած բոլոր կալուածքների։
Կալուածքների ցուցակը կախված է ընկերութեան շէնքի մուտքի մօտ։ Պայմանները՝ մասին տեղեկանալ ընկերութեան Վարչութեան մօտ։
(17, 20, 23) 3—1

CONSTIPATION
PILULES DE CASCARA MIDY
ԿԱՍԿԱՐԱ-ՄԻԴԻ
Պիլիւլներ, ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՄՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ
Չափ.—2 պիլիւլ երեկոյեան պառկելիս։ Կասկարա-միդին չէ առաջացնում ոչ փորացաւ, ոչ սիրտ-խառնուք, ոչ էլ լուծողութիւն։
Դեղատուն—Midy, 113, Faubourg St. Honoré, Պարիզ։
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ։
(7, 17, 27) (165951) 24—22

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Լիակատար բժշկութիւն ՍԻՖԻԼԻՍԻ և նրա հետևանքների
Ի. Ավրահովի ԷՂԱՆԱԿՈՎ
Որպէս բժշկվել սիֆիլիսից բոլոր շրջաններում և ձևերում նրա հետևանքներից, այսինքն կաթուածներ, տարև, ոսկրացաւ, բծեր, վէրքեր և այլն, նոյնպէս խրացաւ և էկզէմա։
Բժշկութիւն առանց սնդիկի և հոգի անվնաս բուսական բալզամով։
Կատարեալ բժշկութիւն 2—4 շաբաթում առանց վերագարձների։ Բրոշիւրը ուղարկվում է երեք 7 կոպէկանոց մարկաներ ուղարկելուց։ Շատ կան նօտարով վաւերացրած շնորհակալութիւններ և բժիշկների վկայականներ։
Հեղինակի մօտ կարելի է ստանալ ձրի՝ С.-Петербургъ, Колокольная ул., № 11, собств. домъ.
Ծախվում Դ. Ավրահովի մօտ
ՀՆԴԿԱԿԱՆ ԲԱԼԶԱՄ է միմիայն СПБ. Колокольная ул., № 11,
ՍԻՖԻԼԻՍԻ
(հ. կ.)

КАВКАЗСКІЯ МИНЕРАЛЬНЫЯ ВОДЫ:
Министерство Торговли и Промышленности.
НАТУРАЛЬНЫЯ СТОЛОВЫЯ ВОДЫ:
„НАРЗАНЪ“ Кисловодскъ.
„ЕССЕНТУКИ“ № 20
Продажа вездѣ. ● Главный складъ въ Пятигорскѣ.
ПРЕЙСЪ-КУРАНТЫ БЕЗПЛАТНО.
(17, 25, 2, 9) 82,038 27—8

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵԶԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Իսկականը այս կէյժան ունի իր վրա։
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄՕՍԿՎԱՑՈՒՄ ՐԻԳԱՑՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ ՕԴԵՍՍԱՑՈՒՄ ՐՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԻՕՊՕԼԴ ՆԵՑՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ.
ԱՅԴՏԵՂ ԿԱՑ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(հ. կ.) 100—43

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова съ С-ми
Большая Ванкская ул. № 3.